



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 փետրվարի 2014 թվականի N Մ-090-Ա  
քաղ. Երևան

«ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՍՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 31-ի N 3.8-2/1221-14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի փետրվարի 4-ի N 07/07.1/438-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի փետրվարի 1-ի N ՖԲ/ԱնՄ-4/436-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հունվարի 31-ի N 04/07-1/852-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 5-ի N ՎՄ/3-4/989-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, առաջին Եկմայյան 6, ՀՎՀՀ՝ 02552842) կողմից իրականացվող՝ 51,170,450 դրամ ընդհանուր արժեքով «ԱՄՆ-ի «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ուղարկված բեռի (քնապարկի և վրանի) ներմուծում և բաշխում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԱՄՆ-ի «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ԱՄՆ-ից ուղարկված բեռը (6,504 հատ քնապարկ (որպես տաք վերմակ) և 40 հատ վրան, 9814 կգ ընդհանուր քաշով, 122,890 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

4. «Օրբան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳ



ՅԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ